Ալավերտիի պղնձահանքը)։ Այդ հողերը Վագներ համարում է Վրաստանի մաս, նրա հարաւային սահմանների վրայ։

Երկրորդ օրը գիշերում են Ինջա (Inscha) կայարանում, երրորդ օրը՝ Փիփսում (?Pipis)։

«Այստեղ արդէն մենք մտնում ենք Հայաստանի հրաբխային երկրամասը» (6)։

Վագներ դիտմամբ օրուան ընթացքում կարճ ճանապարհ է կտրում, որ ժամանակ ունենայ ուշադիր դիտելու շրջակայքի բնութիւնը։ Երբեմն էլ ժամերով կանգ առնել է տալիս կառքը՝ զանազան բոյսեր, հանքեր եւն. հաւաքելու։ Այդ նպատակով նա շրջագայութիւններ է կատարում Փիփսում, իսկ իր ուղեկիցները առաջ են շարժւում դէպի Քարվանսարա գիւղը (այժմ՝ Իջեւան), երկու ժամ հեռաւորութեան վրայ։

Այդ գաւառամասերի բնակչութիւնը, ասում է Վագներ, խառն է՝ հայ-թաթարական։ Ռուս տիրապետութեան հետեւանքով այդ տեղի թաթարները այնչափ էլ չեն արտագաղթել, թէեւ դարձեալ պակսել են։ «Այդ ժամանակից սկսած՝ այստեղ եւ մանաւանդ (Անդրկովկասի) հարաւային երկրամասերում մահմետական բնակչութիւնը դրեթէ կիսով չափ պակսել է, մինչ քրիստոնեայ տարրերը հայերի ներգաղթով Տաճկաստանից՝ ուժեղացել են»։

Քարվանսարայի (Իջեւան) կլիմայական պայմանները Վագներ բաւական նման է համարում Կենտրոնական Եւրոպայի կլիմայական պայմաններին։ Այսպէս Վ. հետաքրքրական համեմատութիւններ է անում Հայաստանի լեռնաշխարհի եւ Գերմանիայի լեռների բուսական թագաւորութեանց մէջ։ Այդտեղի, յատկապէս Դիլիջանի բուսականութիւնը Վ. անուանում է ստորալպեան, մինչ Դիլիջանից վերեւ արդէն նոր սկսում է Հայաստանի Ալպեան լեռնաշխարհը։

Դիլիջանից Երեւան տանող ճամբու վրայ է գտնւում Սեւանայ լիճը՝ համանուն վանքով, որ եւ այցելում ու նկարագրում է Վագներ։ Սրա ասելով՝ եւրոպացի ճամբորդների թւում Շարդէնն (Chardin) առաջինն է, որ յիշատակութիւն է անում Սեւանի մասին։ Ցոյն պատմիչները եւ աշխարհագրագէտներն ըստ երեւոյթին ծանօթ չեն եղել Սեւանայ լճին, նմանապէս՝ արաբականները։ Շարդէնն եւս անձամբ չէ տեսել Սեւանը, այլ նրա մասին լճի շրջակայքի հայ գիւղացիներից տեղեկութիւններ է հաւաքել՝ Հայաստանում եղած միջոցին»։

Պարրոտն էլ այդ կողմերը չէ եղել, քանի որ նա Հայաստան երթ ու դարձին անցել է Ալարանի (Աշտարակի) խճուղով։ Դիւբուա դը Մոնպերէօրը (Dubois de Montperreur) միայն անցել է շտապ լճի եզերքով, դրանից ութ տարի առաջ, այն եւս՝ ձմեռ ժամանակ (փետրուար), որից եւ՝ նրա աղքատիկ ու թերի ծանօթութիւնները։

Վագներ որոշում է բնագիտական-հանքաբանական ուսումնասիրութեան նպատակով, Սեւանայ վանքն այցելել, իսկ Աբովեան եւ Վ-ի միւս ուղեկիցը Բարոն Հ-Գ, անցնում են Երեւան, ուր նրանք կրկին պիտի հանդիպէին։

Վագներ Սեւանի կլիմայի ու բնութեան մասին անում է մի շարք հետաքրքրական դիտողութիւններ, որ զուտ մասնագիտական արժէք ունին։ Վանքի միաբանների թիւը եղել է 15, իսկ դրանից առաջ՝ եռապատիկ աւելի։ Վանականների կենցաղը շատ տխուր տպաւորութիւն է թողնում ճամբորդի վրայ — տգիտութիւն, ծուլութիւն չորս կողմը։ «Բացի Ս. Գրքից ու մի քանի եկեղեցական գրքերից ու աղօթամատեաններից՝ վանքը չունի եւ ոչ մի գրադարան։ Վանականները բնաւ չգիտեն թէ ի՞նչ է ընթերցանութիւնը։ Աղօթամատեաններն էլ վաղուց գոց գիտեն։ Ոչ գրում են, ոչ վարժարան ունին, ոչ երաժշտութեամբ են զբաղւում, ոչ այգեմշակութեամբ, ոչ էլ դաշտային ու այլ աշխատանքներով... Սեւանում միա՛ւ ուտել չգիտեն, ութ ամիս չարունակ տարուան մէջ՝ մինչեւ իսկ կաթ ու հաւկիթ չեն ուտում, այլ ամենապարզ կանաչեղէններ միայն»։

Կղզու վրայ եւ լճի եզերքներին Վագներ գիտական պտոյտներ է անում, հանքային ու բուսական նմուշներ, ինչպէս նաեւ միջատներ հաւաքում, կլիմայական հետազօտութիւններ կատարում, շրջակայ գիւղացոց տները, նրանց ձկնորսութիւնը դիտում եւ նկարագրը-